ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18.04.2018թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի փետրվարի 2-ի N 30-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Անուշ Խաչատրյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջին կարգի մասնագետ Անի Ղազարյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի, ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի, բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրչյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի, տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջին կարգի մասնագետ Հարություն Ասլանյանի և զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ Ժիրայր Բասմաջյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, կապի և առողջապահության, քաղաքաշինության, պաշտպանության, առևտրի և ծառայությունների, բնության և շրջակա միջավայրի պահպանության, ընդերքօգտագործման և տրանսպորտի ոլորտներում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Մեծ Պարնի համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Անուշ Խաչատրյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Էդգար Հախվերդյան _____

Գագիկ Հախինյան _____

Անի Ղազարյան _____

Արման Մխիթարյան _____

Սպարտակ Ղուբաթյան _____

Արտակ Դեմիրչյան _____

Սամվել Խառատյան _____

Հարություն Ասլանյան _____

Ժիրայր Բաամաջյան _____

Համայնքի ղեկավար՝
Գագիկ Պալյան _____